ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՍԱՐՅԱՆ 22, ՀԵՌ.(374-10) 52-85-11 (406), ՖԱՔՍ (374-10) 525563

« 12 » ապրիլի 2023 թ.

№ ԱՍ/34.1-Մ2-5/1211-2023

«ԳՐԻՆ ՓԱՈՒՐ» ՍՊԸ-ի տնօրեն
Կ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Ձեզ է ուղարկվում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2023 թվականի ապրիլի 12-ի «ԳՐԻՆ ՓԱՈՒՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վարչական բողոքը մերժելու մասին» №125-Ա որոշման պատճենը:

Առդիր՝ 7 էջ:

Recoverable Signature

X

ԱՐԹՈՒՐ ՍԱՖԱՐՅԱՆ

Signed by: SAFARYAN ARTUR 2401750053

Ա. Սաֆարյան

Կատարող՝ Շ.Սողոմոնյան ☎ 56-49-27 (345)

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող
հանձնաժողով
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՍԱՐՅԱՆ Փ. 22
0002
ԱՍ/34.1-Մ2-5/1211-2023 պ/տ

Ց	Յաւույթը վճարված է Tax perçue	H
Ս		A
Ց		Y
Փ		P
Ո		O
Ս		S
Տ		T

ARMENIA YEREVAN 0002 13 APR 2023 HayPost

L0108987315AM

ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁ RETURN	CN15
☐ Անհայտ/ Unknown	☐ Մերժված / Refused
☐ Տեղափոխված/ Gone away	☑ Չի պահանջվել/ Unclaimed
☐ Թերի հասցե/ Insufficient address	☐
Ետ վերադարձման ամսաթիվը / Return Date	

YEREVAN 19 MAY 2023

1308

«ԳՐԻՆ ՓԱՈՒՐ» ՍՊԸ
Armenia ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ Դավթաշեն, 2-րդ թաղամաս, 2.2, 55
տարածք

0059
14 APR 2023

Տրման նշանակման օպերատոր /
Designated operator of origin

ԾԱՆՈՒՑԱԳԻՐ ստացման/հանձնման/վճարման/գրանցման
ADVICE of receipt/of delivery/of payment/of entry

CN 07

Առաքանու հասցեատեր/ Addressee of the item

«ԳՐԻՆ ՓԱՈՒՐ» ՍՊԸ ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ
Դավթաշեն, 2-րդ թաղամաս, շ.2, 55 տարածք

A.R.

Ծառայողական/
On postal service
Ծանուցագիրը վերադարձնող գրասենյակի կնիքը/
On postal service

Առաքանու բնույթը/Nature of the item

☐ Առաջնային նամակ/ Priority letter
☐ Հրատարակչություն/ Printed paper
☐ Ծանրոց/ Parcel
☐ Ոչ առաջնային նամակ/ Non-Priority letter

☐ Պատվիրված/Registered
☐ Վկայագրված հանձնում/ Recorded delivery
☐ Գնահատված/ Insured

Առաքանու թիվը/
No of item LO108987315AM

Գումար/Amount 760

☐ Հասարակ դրամական փոխադրություն/ Ordinary money order

Գումար/Amount 760

☐ Փոխանցման անդորրագիր/ Inpayment money order
☐ Վճարման անդորրագիր/ Outpayment cheque

Լրացվում է նշանակման վայրում/To be completed at the point of destination

Վերոնշված առաքանին պատշաճ կերպով/The item mentioned above has been duly

☐ հանձնվել է/ delivered
☐ վճարվել է/ paid
☐ գրանցվել է ընթացիկ փոստային հաշվին/ credited to giro account

Ամսաթիվ և ստորագրություն/Date and signature

Այս ծանուցագիրը կարող է ստորագրվել հասցեատիրոջ, կամ եթե նշանակման երկրի կանոնակարգը նախատեսում է այդ, այլ լիազորված անձի կողմից/ The advice may be signed by the addressee or,if the regulations of the country of destination so provide by another authorized person.

Լրացվում է ուղարկողի կողմից/To be filled in by the receiver

Առաջնային/Priority
Օդային/By airmail

Վերադարձնել /
Return to

Անուն կամ գրասենյակի անվանում/ Name	ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
Փողոց և թիվ/ Street and No	ՍԱՐՅԱՆ Փ. 22 0002
Բնակավայր և երկիր/ Locality and country	Հայաստան ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ

AL0108987315AM

Հավելյալ Նշում 1՝ ԱՍ/34.1-Մ2-5/1211-2023 պ/տ
Հավելյալ Նշում 2՝

powered by Envelope, envelope.haypost.am

ARMENIA
YEREVAN
14 APR 2023
00568

600.0125.12.04.23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

12 ապրիլի 2023 թվականի №125-Ա

«ԳՐԻՆ ՓԱՈՒՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ԳՐԻՆ ՓԱՈՒՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2023 թվականի հունվարի 17-ին վարչական բողոք է ներկայացրել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով անվավեր ճանաչել Հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 23-ի №493-Ա որոշումը (այսուհետ՝ Որոշում): Որպես վարչական բողոքի հիմնավորում՝ Ընկերությունը, մատնանշելով Սահմանադրության 50-րդ հոդվածը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ, 38-րդ և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 31-րդ հոդվածների 1-ին մասերը և եզրահանգումներ կատարելով վարչական վարույթի ընթացքում անձի լսված լինելու իրավունքի իրացման ու բոլոր փաստերի լրիվ, օբյեկտիվ, բազմակողմանի քննարկման անհրաժեշտության մասին, պնդել է, որ վարչական վարույթի լսումներին մասնակցելու վերաբերյալ ծանուցումը ստանալուց հետո չի ունեցել օրենքով սահմանված ժամանակ՝ համապատասխան գրավոր դիրքորոշումը և այն հիմնավորող փաստաթղթերը Հանձնաժողով ներկայացնելու համար: Ընկերությունը նշել է նաև, որ տեղի համայնքի բնակիչների գործողությունների հետևանքով իր համար ստեղծվել են անկանխատեսելի և անկանխելի հանգամանքներ (ֆորս մաժոր), ինչի պատճառով էլ զրկված է եղել շինարարական աշխատանքներ կատարելու հնարավորությունից, և պնդել, որ նշված հանգամանքը, որպես անհաղթահարելի ուժ, ազատում է իրեն Որոշմամբ կիրառված պատասխանատվությունից,

բ) սույն թվականի հունվարի 18-ից հարուցվել է Որոշման վերաբերյալ վարչական բողոքի քննարկման վարչական վարույթ, ինչի վերաբերյալ Ընկերությունը ծանուցվել է սույն

թվականի փետրվարի 27-ին: Մասնավորապես, Ընկերությանն ուղղված Հանձնաժողովի 2023 թվականի հունվարի 18-ի №ԳԲ/34.1-Մ2-5/131-2023 գրությունը 2023 թվականի փետրվարի 21-ին «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության կողմից վերադարձվել է Հանձնաժողով՝ չպահանջված լինելու պատճառով, ինչից հետո, ղեկավարվելով «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 4-րդ մասով ՝ 2023 թվականի փետրվարի 24-ին վերը նշված գրությունը՝ վարչական բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթի հարուցման վերաբերյալ հրապարակվել է http://www.azdarar.am և Հանձնաժողովի պաշտոնական կայքէջերում,

գ) վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը որևէ հիմնավորում կամ փաստարկ չի ներկայացրել,

դ) իրականացված վարույթի շրջանակում հաստատված է համարվել, որ՝

1) Որոշման իրավաչափությունը բխում է հետևյալ իրավանորմերից.

- «Էներգետիկայի մասին» օրենքի 30.1-ին հոդվածի 2-րդ մասի «ա» և «բ» կետերի համաձայն՝ լիցենզավորված անձի գործունեության լիցենզիան ի թիվս այլ դեպքերի կարող է դադարեցվել նաև, եթե արտադրության լիցենզիա ունեցող անձը լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածում չի ավարտել կայանի կառուցման աշխատանքները, Հանձնաժողովի սահմանած կարգով չի դիմել լիցենզիայի պայմաններում փոփոխություններ կատարելու համար, կամ արտադրության լիցենզիա ունեցող անձը լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածում չի ավարտել կայանի կառուցման աշխատանքները, Հանձնաժողովի սահմանած կարգով չի դիմել լիցենզիայով սահմանված կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու հայտով,
- «Էներգետիկայի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ի թիվս այլնի, Էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիան ուժը կորցրած ճանաչվելու դեպքում երաշխիքային գումարը Հանձնաժողովի սահմանած կարգով և չափով ենթակա է փոխանցման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերում Հանձնաժողովի կողմից երաշխիքային գումարը (լրիվ կամ մասնակի) պետական բյուջե փոխանցելու վերաբերյալ որոշման ընդունման պարագայում, եթե լիցենզավորված անձը նախկինում Հանձնաժողով երաշխիք չի ներկայացրել, ներկայացրած երաշխիքի

գործողության ժամկետը լրացել է, և (կամ) դրանով ամրագրված (դրա շրջանակում առկա) գումարի չափը չի բավարարում նույն որոշման պահանջի ամբողջական ապահովման համար, ապա նույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված գումարը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու պարտավորությունն ամբողջությամբ կամ չբավարարող մասով կրում է լիցենզավորված անձը,

- Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի՝

  3-րդ կետի համաձայն՝ երաշխիքով սահմանման ենթակա գումարի հաշվարկման բազա է համարվում «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված բազային տուրքի չափը: Երաշխիքով սահմանման ենթակա գումարի մեծությունը պետք է հավասար լինի կառուցվող կայանի, իսկ կայանի վերակառուցման դեպքում դրա արդյունքում ավելացող հաշվարկային (տեղակայվող) հզորության (արտահայտված կիլովատտերով) և «Պետական տուրքի մասին» օրենքով սահմանված բազային տուրքի երկուսուկեսապատիկի արտադրյալին, սակայն ոչ պակաս, քան 500 000 դրամը,

  6-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարն ամբողջությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե որոշում է ընդունել արտադրության լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին, բացառությամբ Կարգի 46.1-ին կետի համաձայն լիցենզիայի տրամադրման մասին որոշումն ուժը կորցրած ճանաչելու դեպքի,

  9-րդ կետի համաձայն՝ նույն կարգի 6-րդ կետով նախատեսված որոշման ընդունման դեպքում, եթե լիցենզավորված անձի կողմից նախկինում Հանձնաժողով երաշխիք չի ներկայացվել, ներկայացված երաշխիքի գործողության ժամկետը լրացել է կամ դրանով ամրագրված (դրա շրջանակում առկա) գումարի չափը չի բավարարում նույն որոշման պահանջի ամբողջական ապահովման համար, նույն կարգի 6-րդ կետով նախատեսված գումարի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու

պարտավորությունն ամբողջությամբ կամ չբավարարող մասով կրում է լիցենզավորված անձը.

2) Որոշումն ընդունվել է օրենքներին ու գործող այլ իրավակարգավորումներին համապատասխան, ուստի դրա վերանայման հիմքերը բացակայում են: Մասնավորապես.

- Ընկերությունը մինչև Հանձնաժողովի 2017 թվականի հուլիսի 4-ի №296Ա որոշմամբ իրեն տրամադրված «Մեղրի-2» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0606 լիցենզիայով (այսուհետ՝ Լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածի ավարտը՝ 2022 թվականի սեպտեմբերի 2-ը, չի վերացրել Լիցենզիայի կասեցման համար հիմք հանդիսացած խախտումը, Հանձնաժողով չի ներկայացրել համապատասխան հիմնավորող փաստաթղթեր, և Հանձնաժողովը չի վերացրել Լիցենզիայի կասեցումը, Ընկերությունը չի ավարտել Կայանի կառուցման աշխատանքները, Հանձնաժողովի սահմանած կարգով չի դիմել Լիցենզիայի պայմաններում փոփոխություններ կատարելու համար կամ Լիցենզիայով սահմանած կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու հայտով, ինչը «Էներգետիկայի մասին» օրենքի 30.1 հոդվածի 2-րդ մասի «ա» և «բ» կետերի համաձայն լիցենզիայի դադարեցման հիմք է: Նշվածով պայմանավորված էլ հարուցվել է վարչական վարույթ և Որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել Ընկերությանը Լիցենզիան տրամադրելու վերաբերյալ Հանձնաժողովի 2017 թվականի հուլիսի 4-ի №296Ա որոշումը: Միաժամանակ, հաշվի առնելով, որ Ընկերության ներկայացրած երաշխիքի գործողության ժամկետը լրացել է 2021 թվականի հունիսի 16-ին և ղեկավարվելով «Էներգետիկայի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով և Կարգով, Որոշմամբ Ընկերությունը պարտավորեցվել է Կարգի 6-րդ կետով նախատեսված երաշխիքային գումարը՝ 5 275 000 (հինգ միլիոն երկու հարյուր յոթանասունհինգ հազար) դրամը, փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,
- անդրադառնալով վարչական բողոքով ներկայացված Ընկերության պնդումներին՝ հարկ է փաստել, որ դրանք զուրկ են թե փաստական, թե իրավական հիմնավորումներից: Մասնավորապես, լսված լինելու իրավունքի

մասով. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի մասնակցի լսված լինելու իրավունքն ապահովվում է վարույթի հարուցման մասին ծանուցվելուց հետո վերջինիս կողմից տասնօրյա ժամկետում վարույթում քննարկվող հարցի վերաբերյալ Հանձնաժողով գրավոր դիրքորոշում և այն հիմնավորող փաստաթղթեր, նյութեր կամ այլ տեղեկություններ ներկայացնելու միջոցով: Տվյալ դեպքում, Ընկերության նկատմամբ Որոշման ընդունմանն ուղղված վարչական վարույթը հարուցվել է 2022 թվականի սեպտեմբերի 7-ից, ինչի մասին Ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2022 թվականի սեպտեմբերի 7-ի №ԳԲ/34.1-Մ4-3/3087-2022 գրությամբ, որը, փոստային առաքման ծանուցագրի համաձայն, Ընկերությանն է հանձնվել 2022 թվականի հոկտեմբերի 15-ին: Նույն գրությամբ Ընկերությանն առաջարկվել է նաև «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան վարչական վարույթի մասնակցի լսված լինելու իրավունքն ապահովելու նպատակով, գրությունն ստանալուց հետո տասնօրյա ժամկետում ներկայացնել վարույթում քննարկվող հարցի վերաբերյալ Ընկերության դիրքորոշումը և այն հիմնավորող փաստաթղթերը: Սակայն վարչական վարույթի շրջանակում Ընկերության կողմից որևէ հիմնավորում կամ փաստարկ չի ներկայացվել ոչ միայն օրենքով սահմանված տասնօրյա ժամկետում, այլ մինչև Որոշման ընդունումը՝ 2022 թվականի նոյեմբերի 23-ը: Ավելին, չնայած Ընկերության լսված լինելու իրավունքի իրացումն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ապահովված է եղել, այդուհանդերձ Ընկերությունը հրավիրվել է նաև մասնակցելու Հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 23-ի նիստին, որին մասնակցել է Ընկերության տնօրեն Կարեն Գասպարյանը և հայտնել Որոշման նախագծի առնչությամբ իր դիրքորոշումը: Նշվածի համատեքստում լիովին անհասկանալի և հիմնազուրկ է համապատասխան գրավոր դիրքորոշումը և այն հիմնավորող փաստաթղթերը Հանձնաժողով ներկայացնելու համար օրենքով սահմանված ժամանակ չունենալու վերաբերյալ Ընկերության պնդումը:

Ինչ վերաբերում է Ընկերության պնդմանն առ այն, որ առկա է եղել անհաղթահարելի ուժ, որն էլ ազատում է իրեն Որոշմամբ կիրառված

պատասխանատվությունից, ապա այն ևս որևէ կերպ փաստարկված և հիմնավորված չէ: Մասնավորապես, Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 10-րդ կետի համաձայն՝ երաշխիքով սահմանված գումարը սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չի փոխանցվում, եթե Ընկերության կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է ֆորս մաժորի: Տվյալ դեպքում Ընկերությունը ոչ Որոշման ընդունմանն ուղղված, ոչ էլ սույն վարչական վարույթի շրջանակում որևէ կերպ չի հիմնավորել Կայանի կառուցման՝ իր պարտավորության չկատարումը, համապատասխան ժամկետում Լիցենզիայի կասեցման հիմքի չվերացումը և (կամ) Լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար Հանձնաժողով չդիմելը ֆորս մաժորի հետևանք լինելու հանգամանքը: Մասնավորապես, որպեսզի հանգամանքը համարվի ֆորսմաժորային, անհրաժեշտ է, որ այն հանգեցրած լինի կոնկրետ պարտավորության չկատարման, և լիցենզավորված անձը ձեռնարկած լինի բոլոր անհրաժեշտ միջոցներն ու ջանքերը (այդ թվում՝ նախազգուշական, այլընտրանքային, օրենսդրությամբ նախատեսված) նշված հանգամանքները (հետևանքները) կանխելու, վերացնելու, մեղմելու կամ դրանցից խուսափելու համար, մինչդեռ Ընկերությունը որևէ կերպ չի ապացուցել և չի հիմնավորել իր կողմից մատնանշված հանգամանքների առկայությունը, այն պարագայում, երբ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում,

3) Որոշումն ընդունվել է գործող իրավակարգավորումներին համապատասխան, ու այն անվավեր ճանաչելու հիմքերը բացակայում են, և

հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետը, Հանձնաժողովը **որոշում է**.

1. Մերժել Ընկերության 2023 թվականի հունվարի 17-ի վարչական բողոքը՝ Որոշումն անվավեր ճանաչելու վերաբերյալ, և Որոշումը թողնել անփոփոխ:

2. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
12 ապրիլի 2023թ.